

7844



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմոնյան



«17» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 125 - 24

Նախաձեռնող՝

«ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ
Չաքարիա Քանաքեռցու փ/., 2/131/2 բն. 23

Գործունեությունը՝

Հոկտեմբերյանի խմբի ավազակոպճագլաքարային
խառնուրդի հանքավայրի «Արգավանդ» տեղամասի
արդյունահանում
Արմավիրի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲՓ № 125 - 24

«17» հուլիսի 2024թ.

Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ավագակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի «Արգավանդ» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնքի Տանձուտ բնակավայր

Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ԱԿԳԽ «Արգավանդ» տեղամասում «ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ընդունված՝ 2014 թվականի հունիսի 21-ին) 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ վերը նշված նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ԱԿԳԽ հանքավայրի «Արգավանդ» տեղամասը գտնվում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Տանձուտ բնակավայրի վարչական տարածքում, Տանձուտ բնակավայրից 1.8 կմ հյուսիսարևելք: Մոտակա բնակավայրերն են Արգավանդը (2.0կմ) և Արևիկը (1.8 կմ), որոնց հետ կապն ապահովվում է գրունտային ճանապարհով: Հանքավայրից մինչև H 15 մայրուղին ընկած հեռավորությունը կազմում է 5 կմ: Ընկերության կողմից հայցվող տարածքի կոորդինատներով պարփակված տարածքը (մակերեսը՝ 4.758073 հա) Արգավանդ բնակավայրի՝ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամաս է:

Աշխարհագրական տեսակետից դիտարկվող շրջանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևմտյան մասում և իրենից ներկայացնում է ընդարձակ հարթավայրային տեղանք: Հարթավայրը սակավաթեք անկմամբ հարավ-արևմուտք ուղղությամբ ձգվում է դեպի ժամանակակից Արաքսի գետահովիտը: Հանքավայրի շրջանի բացարձակ նիշերը տատանվում են ծ.մ. 845-865 մ բացարձակ բարձրությունների վրա: Երկրաբանական տեսակետից իրենից ներկայացնում է միջլեռնային տեկտոնական իջվածք: Օգտակար հաստաշերտը ներկայացված է տարահատիկ ավազներով և տարբեր մեծության կոպճագլաքարերով: Տեղանքը հարթ է, սակայն ռելիեֆի փոստրակներում կան բազմաթիվ լճակներ, ճահճուտներ և ոռոգման ջրանցքներ: Հանքավայրին ամենամոտ գտնվող ջրանցքի հեռավորությունը կազմում է 0.5 կմ:

Հոկտեմբերյանի խմբի ավագակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի պաշարները (ներառյալ «Արգավանդ տեղամասինը») հաստատվել են Հայկական Հանքաբանական վարչության օգտակար հանածոների պաշարների տարածքային հանձնաժողովի 04.08.1977թ. №231 արձանագրությամբ՝ հետևյալ



կարգերով. A - 1735.0 հազ.մ³, B - 5758.4 հազ.մ³, C1 - 4774.3 հազ.մ³, A+ B+ C₁ - 12267.7 հազ.մ³: Հանքավայրի պաշարները գնահատվել է որպես լցանյութ ծանր բետոնի արտադրության համար: Հանքավայրի ավազը և կոպճագլաքարը բավարարում են համապատասխանաբար ԳՈՍՏ 8736-77 և ԳՈՍՏ 8268-74-ի պահանջներին:

Հայցվող՝ 4.75 հա մակերեսով տեղամասը, որի սահմաններում «ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊ Ընկերությունը ցանկանում է իրականացնել ավազի արդյունահանում եզրագծվում է ARM WGS-84 համակարգի հետևյալ կոորդինատներով.

1.	4439145.0	8423337.0	12.	4439194.0	8423959.2
2.	4439140.9	8423376.1	13.	4439192.49	8423958.99
3.	4439134.5	8423627.8	14.	4439161.77	8423861.73
4.	4439136.5	8423752.0	15.	4439148.56	8423847.96
5.	4439211.5	8423815.5	16.	4439129.73	8423839.52
6.	4439224.63	8423817.18	17.	4439122.0	8423821.38
7.	4439223.02	8423832.34	18.	4439106.76	8423803.44
8.	4439236.63	8423858.84	19.	4439067.0	8423782.0
9.	4439260.65	8423898.46	20.	4439051.0	8423755.0
10.	4439293.79	8423954.8	21.	4439084.0	8423366.5:
11.	4439305.26	8423974.05			

ԱԿԳԽ հանքավայրի Արգավանդի տեղամասի Ընկերությանը հատկացվող բացահանքը նախատեսվում է շահագործել մեկ տեղամասով: Արդյունաբերական պաշարները կազմում են՝ 259757 մ³ մարվող (241990 մ³ արդյունահանվող)՝ A+B+C₁ կարգով: Կորզվող պաշարները կազմում են ընդամենը 241990 մ³ ավազակոպճագլաքարային խառնուրդ: Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում 12988 մ³ (մարվող) 12099.5 մ³ (արդյունահանվող) ավազակոպճագլաքարային խառնուրդ: Հանքավայրի ծառայման ժամկետն ընդունվում է 20 տարի:

Հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները և հատկապես ծածկող շերտի ոչ մեծ ծավալը և օգտակար հանածոյի փոքր հզորությունը հնարավորություն են տալիս մշակման բաց եղանակի ընտրությունը՝ համատարած մեկ աստիճանով համակարգով, աստիճանի բարձրությունն ընդունել ըստ հանքաշերտի հզորության: Ավազի արդյունահանումը նախատեսվում է կատարել առանց նախնական փխրեցման, անմիջապես դրազլայնի միջոցով՝ նախապես բուլդոզերով հեռացնելով մակաբացման ապարների շերտը: Արդյունահանման աշխատանքները կատարվելու են էքսկավատոր-դրազլայնի կամ էքսկավատորի միջոցով: Արդյունահանված ավազակոպճագլաքարային խառնուրդը նախատեսվում է իրացնել տեղում՝ սպառողի ավտոտրանսպորտով: Մակաբացման ապարները նախատեսված են կուտակել բացահանքի եզրագծի հյուսիսային մասում, հետագայում հնարավորություն ստեղծվելուց հետո, մակաբացման ապարները նախատեսվում է տեղադրել հանքավայրի արդյունահանված հատվածի վրա:

Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերն են՝

- բացահանքի առավելագույն երկարությունը - 657.0մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը - 110.0մ,
- մշակվող ԱԿԳԽ խառնուրդի հաստաշերտի միջին հզորությունը - A+C₁ բլոկ 5.14մ, B+C₁ բլոկ 5.9մ,
- բացահանքի առավելագույն խորությունը - 6.27մ,
- բացահանքի օտարման մակերեսը - 4.75 հա,
- ԱԿԳՔ խառնուրդի հաշվեկշռային պաշարները - 259757 մ³,
- ԱԿԳՔ խառնուրդի կորզվող պաշարները - 241990 մ³,
- մակաբացման ապարների ծավալը - 22759 մ³:
- մակաբացման միջին գործակիցը՝ 0.09 մ³/մ³



Հանքավայրում արդյունահանման աշխատանքները սկսվելու են բացահանքի արևմտյան մասից: Քանի որ հանքավայրը գտնվում է արդեն իսկ առկա գրունտային ճանապարհի հարևանությամբ, ուստի մուտքային ավտոճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից՝ հանքաշերտի մշակման ժամանակ ընդունված է ընդլայնական միակողանի, խորացող մշակման համակարգ, մակաբացման ապարների արտաքին լցակույտ տեղափոխմամբ: Աշխատանքները կատարվում են, էքսկավատոր KAMATSU PC-300-8-ով, բեռնիչ L-34-ով, ավտոինքնաթափ SHACMAN X 3000 լեռնատրանսպորտային համալիրով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

- աստիճանների բարձրությունը – 3.085 մ
- վերջնական դիրքում /2հանքաստիճաններ միացվելուց հետո/ - 6.17 մ,
- աշխատանքային թեքման անկյունը հորիզոնի նկատմամբ - 450-500;
- մարված հանքաստիճանի թեքման անկյուն – 45⁰-50⁰;
- ընթացքաշերտի լայնությունը – 8.5 մ;
- էքսկավատորի աշխատանքի անվտանգ գոտու շառավիղը – 18 մ;
- աշխատանքային հրապարակի լայնությունը – 30 մ:

ԱԿԳԽ արդյունահանման աշխատանքները կատարվելու են դեպի ներքև շերտի հանման եղանակով, 1.4 մ³ շերտի տարողությամբ KOMATSU PC 300-8 մակնիշի էքսկավատորով: Նախ կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին՝ օգտակար հանածոյի ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվելու է ջրազրկված օգտակար հանածոյի կույտի բարձումը սպառողների տրանսպորտային միջոցների մեջ:

Մակաբացման ապարները բացահանքում կազմում են 22759 մ³: Մակաբացման ապարները բեռնիչով բարձրվում են ավտոինքնաթափի մեջ և տեղափոխվում լցակույտ:

Հանքավայրի շահագործման ընթացքում առաջանալու է 22759 մ³ ծավալի մակաբացման ապար, որոնք ներկայացված են ժամանակակից ջրաբերուկային նստվածքներով՝ միախառնված կոպճի և գլաքարերի բեկորների հետ: Հանքավայրի շահագործման շրջանում մակաբացման ապարները պահեստավորվում են բացահանքի սահմաններից դուրս՝ լցակույտի տեղամասում: Մակաբացման ապարներ՝ 22759 մ³: Լցակույտի առավելագույն բարձրությունը կազմում է՝ 2մ: Զբաղեցրած մակերեսը վերևում կազմում է՝ 10000 մ², հիմքի մասում՝ 17700 մ² մակերես, կողերի թեքման անկյունը 35⁰:

Համաձայն նախագծային լուծումների օգտակար հանածոյի արդյունահանումը նախատեսվում է իրականացնել էքսկավատոր-ավտոինքնաթափ համակցությամբ՝ մեկ հանքաստիճանով, օգտակար հաստվածքի ամբողջ խորությամբ: Օգտակար հանածոյի արդյունահանումից հետո իրականացվելու է շահագործված հանքախորշում ավազանների կառուցում, քանի որ գրունտային ջրերի ներծծման հաշվին արդյունահանման արդյունքում կառաջանա 5հա մակերեսով, 5մ խորությամբ լճակ /ինչպես հանդիպում է հարակից տարածքներում/, որտեղ ըստ կանխատեսումների կարող է կուտակվել 250.0 հազ մ³ ջուր: Արդյունահանման աշխատանքներն իրականացնելուց հետո նախատեսվում է մակաբացման ապարներով լճակի վրա կառուցել ճանապարհներ:

Քարհանքի մատակարարումը տեխնիկական ջրով նախատեսված է լեռնային զանգվածների խոնավացման, փոշենստեցման, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվում է բեռնատար ջրատար մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով: Ջրային ռեսուրսների աղտոտում չի կանխատեսվում, քանի որ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում, իսկ փոշենստեցման համար ջրցանը նախատեսվում է իրականացնել այնպիսի ծավալներով, որ արտահոսք չառաջանա: Փոշենստեցման մակերեսներում /ավտոճանապարհների և լցակույտի



ընդհանուր՝ 18200 մ² մակերեսում/ նախատեսված է աշխատանքային հրապարակը ջրել 2 անգամ: Տեխնիկական ջուրը նախատեսվում է վերցնել բացահանք ներծծվող ջրերից իսկ աշխատողների խմելու և կենցաղային նպատակով ջուրը նախատեսված է վերցնել Տանձուտ բնակավայրի ընդհանուր ջրամատակարարման ցանցից՝ ջրօգտագործման թույլտվության և ջրօգտագործման պայմանագրերի շրջանակներում: Բացահանքում ջրերի մակարդակը իջեցնելու նպատակով նախատեսվում է ջրերն ուղորդել ընդհանուր ոռոգման համակարգ ջրահեռացնող կառուցվածքների:

Բացահանքի տարածք թափվող տեղումները կուտակվելու են լճակում: Կենցաղային կեղտաջրերը /0.18 մ³ օրեկան ծավալով) կլցվեն արտադրական հրապարակում նախատեսվող բետոնային լցարան, որտեղից սահմանված կարգով պարբերաբար կհեռացվեն:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է տրանսպորտային աշխատանքներով և արտահայտվում է փոշու և ծխագազերի առաջացմամբ: Հանքավայրի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, ավտոճանապարհ) պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,

- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում ճայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակարդակի նվազեցման նպատակով,

- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,

- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա գտիչների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,

- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,

- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում որպես մետաղական թափոն,

- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են ընդերքօգտագործման աշխատանքներից: Այդ տեղ-տեղ հանդիպող հողային ծածկույթն աչքի է ընկնում հումուսի չնչին պարունակությամբ (1-1.5%) և քարքարոտությամբ: Օգտակար հանածոյի մարմինը ծածկող ապարների ծավալը շուրջ 23.0 հազ.մ³ է, որից մոտ 10.0 հազ.մ³ -ը կազմում է հողաբուսական շերտի (հողի բերրի շերտ) ծավալը, որի հանման, տեղափոխման, պահպանման և օգտագործման կարգը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: Արտադրական հրապարակի տարածքի աղտոտումը նավթամթերքներով կարող է մեղմացվել ԲԿՊ-ով ամրագրված մեղմացնող միջոցառումների իրականացման շնորհիվ:

Հանքավայրի տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց ինտենսիվությունը ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը չի գերազանցի թույլատրելի մակարդակը: Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը բնակավայրերից, մեկ հերթափոխի աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ճայնային բնութագիրը բնակավայրի



սահմաններում կգտնվի նորմայի սահմաններում (45դՔԱ): Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով նախատեսվում է մշակել ժամանակացույց, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների կիրառումից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղադրել խլացուցիչներ: Հանքարդյունահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված հնարավոր է առաջանա նաև առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված կլինի տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը չպետք է գերազանցի 112դՔԱ:

Արդյունահանման աշխատանքներն ավարտելուց հետո նախատեսվում է իրականացնել մշակված տարածքի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա: Հանքավայրի արդյունահանման արդյունքում առաջանալու է մոտ 4.0մ խորության լճակ՝ 4.9 հա մակերեսում: Ռեկուլտիվացիայի նպատակով հանքավայրի ամբողջական շահագործումից առաջացող՝ 23368 մ³ մակաբացման ապարները լցակայանային տնտեսությունից ավտոինքնաթափերով կտեղափոխվեն լճակ: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո լճակի հանդիպակաց ափերը միմյանց հետ կկապվեն կառուցվող ճանապարհներով /երեք նմանատիպ ճանապարհի ընդհանուր երկարությունը կլինի 270 գծ.մ, մակերեսը՝ 1420 մ² մակերեսով/: Նախատեսվում է ճանապարհներին տեղադրել նախագգուշացնող համակարգեր: Այս աշխատանքները պետք է դիտարկել որպես հանքավայրի փակում և ռեկուլտիվացում, որի համար ընկերությունը նախատեսել է ներդնել ֆինանսական միջոցներ: Ամբողջ ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսված ծախսերը կկազմեն՝ 1221.41 հազ. ՀՀ դրամ, իսկ փակման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվը գնահատվել է 1621.41 հազ. ՀՀ դրամ: Գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Կառավարության 2021թ.-ի հոկտեմբերի 21-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով: Հանքավայրի շահագործման ավարտից 2 տարի առաջ կներկայացվի հանքի վերջնական փակման ծրագիրը:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը և սոցիալական միջավայրը /ներառյալ՝ աղմուկ, թրթռում/: Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան ծախսերը կազմում են 150.0 հազ. ՀՀ դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են միջոցառումներ՝ ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ՝ ուղղված կենսաբազմազանության և հողային ռեսուրսների պահպանությանը: Համաձայն կենսաբազմազանության վերաբերյալ ներկայացված ՇՄԱԳ-ում ներկայացված տեղեկատվության՝ գործունեության տարածքում առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակները բացակայում են: Հանքավայրի տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող, կամ բնության հուշարձանների տարածքներում:

եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության



փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Տանձուտ բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ (չորս քննարկում), որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության և հիմնականում կարևորվել է արդյունահանման աշխատանքների ընթացքում աշխատանքներում ազդակիր բնակավայրից աշխատատեղերի ստեղծումն ու Ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը: Քննարկվել են համայնքին սոցիալ-տնտեսական աջակցության հնարավոր ծրագրերը, ինչպես նաև արդյունահանման աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավման հարցը: «ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն նախատեսում է պարբերաբար հանդիպել համայնքի ղեկավարության հետ՝ քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և լրացուցիչ ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արմավիրի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Վերլուծելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության և հանրային քննարկումների արդյունքները, պետք է փաստել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել և ապահովել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև Տանձուտ բնակավայրում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:
2. ԱԿԳԽ զանգվածի արդյունահանման աշխատանքներն իրականացնել առաջնորդվելով՝ Ջրային օրենսգրքի 1-ին, 21-րդ, 32-րդ և 99-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջներով:
3. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պատասխանատվորդ մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների




վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

4. Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ Ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան կազմել հանքի փակման վերջնական ծրագիր և ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

5. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում նախատեսված միջոցառումների իրականացումը (կարևորելով՝ փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանի, հումք տեղափոխող մեքենաների բեռնվածության և եթերի ապահովումը), դրանց իրականացման ժամանակացույցերը և պայմանները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի «Արգավանդ» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝  Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝  Հերիքնազ Մկրտչյան